



Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Օշականի Փ. Բաբկենյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ
Առարկա՝ Հայոց լեզու և գրականություն
Թեմա՝ Կնոջ կերպարը գրականության մեջ

Վերապատրաստող, մենթոր՝ Նարինե Մեսրոպյան
Ուսուցիչ՝ Գայանե Մելիքյան

2022

Բովանդակություն

Ներածություն	3
Կնոջ կերպարը հայ գրականության վաղ շրջանում	5
Կնոջ կերպարը <<Սասնա ծռեր>> էպոսում.....	6
Կնոջ կերպարը միջնադարյան գրականության մեջ	8
Կնոջ կերպարը 19-20-րդ դարերում հայ գրականության մեջ.....	11
<i>Եզրակացություն</i>	14
<i>Օգտագործված գրականության ցանկ</i>	15

Ներածություն

« Մարդ լինելը դժվար է, կին լինելն՝ առավել ևս»:

Մարտի Լարնի

Ինչու՞ ընտրեցի <<Կնոջ կերպարը հայ գրականության մեջ>> թեման:

Ես կին եմ, մայր, ուսուցիչ, և ինձ համար կարևոր է իմ աշակերտների հոգևոր դաստիարակությունը, նրանց աշխարհաճանաչողությունը:

Թեմայի արդիականությունը Մեր ժամանակներում առաջնակարգ նշանակություն է ստանում կնոջ դերը հասարակություն մեջ:

Իմ հետազոտական աշխատանքի նպատակը ցանկանում եմ ձևակերպել Գարեգին Նժդեհի կարևորագույն մտքով. <<Կինը պետք է լինի ընկերն ու օգնականը և ոչ աղախինը տղամարդու>>:

Ես ցանկանում եմ.

ա) սովորեցնել աշակերտին՝ ապագա տղամարդուն, կնոջն ընկալել որպես ընկեր, օգնական:

բ) սովորեցնել աշակերտուհուն՝ ապագա կնոջը, աջակցել, լրացնել իր կողքին կանգնած տղամարդուն:

Չետազոտականի նպատակը լրացնում են Ջուզեպպե Մաձինիի խոսքերը. «Սիրեցեք և հարգեցեք կնոջը. Նրա մեջ փնտրեք ոչ միայն սփոփանք, այլև ներշնչման, ձեր բարոյական ու մտավոր ընդունակությունների կրկնապատկման ուժերը»:

Չետազոտության խնդիրներն են՝

1. ուսումնասիրել թեմային վերաբերող գրականությունը,
2. կազմակերպել քննարկումներ աշակերտների հետ,
3. հիմնական դպրոցի գրականության առարկայի շրջանակներում զուգահեռներ անցկացնել կանանց կերպարների միջև,
4. ուսումնասիրել հայ գրականության դասավանդման գործընթացում սովորողների աշխարհայացքի ձևավորումը:

Կնոջ կերպարը հայ գրականության վաղ շրջանում

Քերթողահայր Խորենացու «Հայոց պատմությունից» իմանում ենք, որ նրա ապրած ժամանակներում 5-րդ դարում, լայն տարածված են եղել հնագույն ու հին ժամանակներից եկած բանահյուսական տարբեր ժանրերի ստեղծագործություններ: Խորենացու միջոցով մեզ են հասել առասպելական և պատմա-վիպական մի քանի երգեր:

Մովսես Խորենացու «Հայոց պատմության»գրքից ակնառու է հայուհու կերպարը հայ գրականության մեջ:Առաջին գիրքը՝ «Մեծերի ծննդաբանությունը»ավարտվում է

«Տիգրան և Աժդահակ» վիպերգով:

Այս վիպերգում նոր ուժով է դրսևորվում իր ժամանակաշրջանին բնորոշ այնպիսի երևույթներ, ինչպես ազատամտությունն ու ազատասիրությունը, հզոր պետականության ստեղծմամբ, որտեղ-պատմագեղարվեստական նորություն պետք է համարվել Տիգրանուհու հայրսենասիրական վառ անհատականության դրսևորումը: Նա հայրենասերների սրբազան ցուցակում պատվավոր առաջին տեղն զբաղեցնող այն Հայ տիկինն է, որն իր բարոյական կարողություններով, մտավոր ունակությամբ, հեռատեսությամբ և հասարակական ծանրակշիռ գործունեությամբ զիջում Հայոց այրերին, և նույնիսկ, առանձին հանգամանքներում, նրանց հետ հավասար պայքարում է հայրենիքի թշնամիների դեմ: Չնայած Մարաց թագավոր Աժդահակի բազում սպառնալիքներին, թե իր կամքը չկատարելու դեպքում նրան խայտառակ ու նշավակելի կործանում է սպառնում, քաջասիրտ Տիգրանն ու Տիգրանուհին, սեփական կյանքը վտանգի ենթարկելով, կազմակերպվող դավադրության մասին հայտնում է եղբորը՝ փրկելով նրան սպանությունից: «Երբ Աժդահակը Տիգրանուհուն տիկնության մեջ հայտարարեց,թե իր թագավորության մեջ ոչինչ չէր գործում առանց նրա հավանության,այլ ամեն բան կարգադրում էր նրա ասածի պես և հրամայում էր,բոլորը նրա ասածին հնազանդվեն:Այս այսպես կարգադրելով՝սկսում է այնուհետև մեղմով խաբեությամբ նրան գրավել.«Դու չգիտես ասում է նա,որ քո եղբայր Տիգրանը նախանձել է,որ դու Արյաց տիկին ես դարձել,նրան գրգռում է նրա կինը՝Չարուհին:Արյաց վրա տիկին կդառնա և աստվածուհիների տեղը կբռնի:Ուրեմն քեզ մնում է ընտրել այս երկուսից մեկը-կամ լինել եղբայրասեր և հանձն առնել խայտառակ կործանում Արյաց առաջ,կամ քո բարին հասկանալով մի օգտակար բան մտածել և առաջիկա անցքերի մասին հոգալ»:

Այս խորամանկության մեջ թաքցրած էր,թե Տիգրանուհին կմեռնի,եթե մարապարսկացու ցանկության համաձայն չվարվի:Իսկ խորագետ գեղեցկուհին այս դավաճանությունը հասկանալով՝սիրալիր խոսքերով է պատասխանում Աժդահակին և մտերիմների միջոցով շտապով ռդբորը հայտնում է նենգությունը»: Տիգրանուհու առաքինությունը գովաբանվում է հենց այն պատճառով, որ նա որպես զգաստ, ուշիմ, սթափ ու խելոք կին, « գեղեցկագույնն ու խոհեմը կանանց մեջ» կարողանում է շուտ կողմնորոշվել , կեղծիքն ու խարդավանքը տարբերել ճշմարտությունից, սերը, նվիրվածությունը ատելությունից ու շողոքորոթությունից և խելամիտ ու հստակ դիրքորո

շում մշակել:

Կնոջ կերպարը «Սասնա ծռեր» Էպոսում

Կանանց կերպարները Էպոսում հակասական են, կան և ըմբոստ կանայք և անձնագրի: Առաջին կնոջ կերպարը Էպոսում Ծովինարն է: Ծովինարն անձնագրի կերպար էր, քանի որ ամուսնացավ խալիֆի հետ, որպեսզի պատերազմ չլինի: Ծովինարն հղիանում է ջրից, քանի որ ջուրը անմահության ու մաքրության խորհրդանիշն է: Նա հանդիսանում է սերնդի սկզբնավորողը: Այսինքն՝ առասպելական տոհմաճառը սկսվում է կնոջից: Էպոսի հաջորդ կնոջ կերպարը Դեղձուն Ծամն է, նա այնքան համարձակ էր, որ հեռվից հեռու լսելով Սանասարի մասին, ինքն է անում առաջին քայլը և նամակ գրում, որպեսզի Սանասարը «գա իրեն առնի»: հաջորդ կնոջ կերպարը Արմաղանն է՝ Միերի կինը: Արմաղանն օգնում էր ամուսնուն ղեկավարել երկիրը: Նա անձնագրիության գնաց, քանի որ ներեց դավաճան ամուսնուն, որն արդեն երկար տարիներ գտնվում էր օտար երկրում՝ սիրուհու մոտ, և ոչ մի տեղեկություն չէր տալիս: Նրա անձնագրիության շնորհիվ շարունակվեց առասպելական տոհմը: Հայ կնոջ մեջ նստած է այդ անձնագրի կերպարը և ինչքան էլ տղամարդը լինի տան գլուխը՝ կինը տան պարանոցն է, և որ կողմ պարանոցը ուզի, այդ կողմ էլ գլուխը կշարժվի: Եվ հենց այդ հոգեբանությունն էլ խանդութի մեջ է :

Էպոսի նախավերջին կնոջ կերպարը Խանդութն է՝ Դավթի կինը: Խանդութ խանումը, որ արտասովոր ուժի ու քաջության տեր կին է, որոշ իրադարձություններում կանացիորեն անօգնական է ու հեզ: Եվ Դավթի թե տեսնում է, թե ինչպես Խանդութ խանումը.

Բոբիկ Էտևեն կը վագի:-

Է, Եսքան ժամանակ Խանդութ խանում

Բոբիկ ուր գետին չէր դրե,

Հիմի բոբիկ դաշտի մեջ կը վագի,

Ախր ամեն Էղեր է արուն:

Քառասուն փահլևաններ յոթ տարի հույսով սպասել են, որ Խանդութն իրենցից մեկին սիրի: Եվ երբ նա նախընտրեց Դավթին, փահլևանները որոշեցին սպանել վերջինիս: Խանդութը Դավթին փրկում ոչ թե ուժով, այլ խելքով, զուտ կանացի հնարամտությամբ:

Փահլևանները, հարբեցրել են Դավթին և հենց որ քնի , կսպանեն նրան: Որպեսզի Դավթի չքնի Խանդութը բարձրանում է կտուրը և երդիկից կաղիններ է նետում:

Կը դիպներ սինուն,

սինին կը զընգա,

Դավթի գլուխ կը վերուցեր,

Էնոք թրեր կը պահեին,

Կը սըրսըփահին Էն ջվալ կաղին՝

Մեկ-մեկ թափեց տակ, պրծուց:

Սիրահարվելով Դավթին, Խանդուլթն ասես կորցնում է իր գերբնական ուժը Է դառնում Է կին, ամուսին:

Դավիթ գնաց, որ ձին քշի, Խանդուլթ ասաց.

-Վայ իմ մտեն գնաց քո ձին քաշեի դուրս:

Ետև Դավթին վազեց ասաց.

-Դավիթ, Դավիթ կանգնի.

Ես գամ քո ձին քաշեմ դուրս

Խանդուլթն ուզում է խոնարհ կին լինել, որ ճանաչում է տնային իր պարտականությունները և կատարում դրանք:

Խանդուլթի սերը Դավթի նկատմամբ այնքան ուժեղ է, որ Դավթի մահից հետո նա ինքնասպան է լինում:

Էպոսի վերջին կնոջ կերպարը Գոհարն էր: Նա ևս խելացի և անձնագոհ էր և խորհրդանշում էր իսկական հայ կնոջ կերպարը:

Էպոսում սրբացվում է կնոջ կերպարը, որովհետև կանայք էին լույս աշխարհ բերում այդ հերոսներին, քանի որ քաջերից են քաջեր ծնվում, նրանք էին սերնդի շարունակողը: Բոլոր ժամանակներում Էլ օջախի սյունը կինն է, ընտանիքի պահողն ու պահպանողն է և որքան Էլ ժամանակները փոխվեն, հայ կնոջ ավանդն ու դերը անփոփոխ ու անզնահատելի կմնան:

ԿՆՈՋ ԿԵՐՊԱՐԸ ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Գրիգոր Նարեկացի: Հինկտակարանյան «Երգ երգոցը» և նրա այլաբանական մեկնությունը ստեղծագործական ակունք դարձնելով՝ Գրիգոր Նարեկացին իր ստեղծած հոգևոր երգի նոր՝ «Գանձարան» (կամ «Տաղարան») ժողովածուի գանձ, տաղ, մեղեդի և հորդորակ (փոխ) միավորներով վերափոխեց հայ հոգևոր երգը: Բանաստեղծական նուրբ ընկալման և ստեղծագործական հնարավորինս կատարյալ յուրացման արդյունքում «Երգ երգոցը» դարձավ նոր տեսակի բանաստեղծության աղբյուր: Հենց Գրիգոր Նարեկացու միջնորդությամբ «Երգ երգոցի» ազդեցության հմայքով պետք է բացատրել միջնադարի հայ հոգևոր և աշխարհիկ քնարերգության պատկերային համակարգի վերաիմաստավորումն ու սիրային քնարերգության նվաճումները [12-30]: Սողոմոն Իմաստունի այս երկը հայ իրականության մեջ արդեն ուներ ուղիղ ընկալման կողմնակիցներ: Թերևս այդ նպատակով Վասպուրականի Գուրգեն արքան քանիցս հորդորում է Գրիգոր Նարեկացուն հեղինակել «Երգ երգոցի» մեկնությունը: Մյուս կողմից, ավանդաբար համարվելով հարսանեկան երգ, այս շքեղ հյուսվածքն արտացոլում է կնոջ և տղամարդու սերը՝ կնոջ արտաքին գեղեցկության մանրամասն նկարագրություններով: Այն պանծացնում է սիրո գաղափարը, և քանի որ Նարեկացու ընկալմամբ երկիրը չունի ավելի պատվական բան, քան կնոջ և տղամարդու սիրո պանծացումը, ուստի այս գործի մեջ պետք է փնտրել Աստծո և հավատացյալի հոգևոր կապի այլաբանությունը: Նարեկացու բանաստեղծության այս մեկնակետը թե՛ հոգևոր-այլաբանական և թե՛ ուղիղ-սիրային իմաստով հսկայական ազդեցություն ունեցավ միջնադարյան քնարերգության վրա: Գրիգոր Նարեկացու պոեզիայից ազդված՝ ստեղծագործական ազատ ներշնչանքով Ներսես Շնորհալիս նոր բարձրության հասցրեց հոգևոր երգը Մարիամ Աստվածածնի և Հռիփսիմե կույսին նվիրված գողտրիկ տաղերում լայնորեն կիրառելով «Երգ երգոց»-ի պատկերային համակարգը: «Տաղ ի սուրբն Հռիփսիմե» խորագիրը կրող քերթվածում Հռիփսիմեն, որպես «Երգ երգոցի» հարսը, անխախտ և սուրբ սիրով կապված է Փեսա Քրիստոսի հետ: Բանաստեղծական ամեն տուն ավարտվում է «ո՛վ, սուրբ Հռիփսիմե» կրկնակով, որտեղ Հռիփսիմեն ներբողվում է որպես թագուհի, գարնանային ծաղիկ, անուշահոտ վարդ, փեսայի դուստր, արեգակնային արդարության հարս: Սիրով բաղձման խանդակաթ ըղձմամբ Հոգևոյն, Անձուկ վառեալ տարփմամբ սրտիւ ի սեր փեսային. Հարսն Որդւոյ թագաւորին գեղեցկութեամբ պճնեալ, ով սուրբ Հռիփսիմե:

Ամենանուրբ գույներով է ներկայացված նաև Մարիամ Աստվածածինը «Տաղ ավետեաց» քերթվածում. Դրախտ աստուծոյ ծաղկալի, Նարդոս բուրեալ ի հոգի, Զովիտ պայծառ շուշանի, Աղբիւր գետոց քառակի: Ներսես Շնորհալու ներբողական այս քերթվածները, ինչպես նաև Գրիգոր Նարեկացու «Շննոյան» տաղը, քնարերգությունն են ներմուծում կնոջ արտաքին նկարագրությունը՝ հոգևոր գրականության այլաբանական ընկալումների սահմաններում. կինը համեմատվում է տարաբնույթ երփներանգ և հոտավետ 6 ծաղիկների, բնության անզուգական երևույթների հետ: Այսպիսի պատկերներով լի են Զովհաննես Թլկուրանցու, Գրիգորիս Աղթամարցու քերթվածները: Մարիամ Աստվածածին՝ որպես մոր, և Զոփիսիմեի՝ իբրև պատմական անձի, բանաստեղծական պատկերները կամուրջ են, որով «Երգ երգոցի» բառապաշարով և պատկերավորման միջոցներով հոգևոր երգը կապվում է աշխարհիկ սիրային քնարերգության հետ: «Երգ երգոցի» գլխավոր խորհրդանիշներ հարսը և փեսան աստիճանաբար դառնում են քնարերգության, ինչպես նաև պատկերագրության հիմնական կերպարներ: Սիրում է մի ջահել այրի գեղեցկուհու: Սիրում է տարերային, իրապաշտ, մեղավոր մի սիրով, որ և խոստովանում ու պատմում է ամենայն պարզությամբ: Եվ բախտավոր է իր սիրով, գրեթե գանգատ չունի «գալումից»: Զրճվանքով հանգի է առնում ու երգում իր երջանկության ժամերը: Սիրած կինն էլ, երևում է, կենսուրախ ու լիասիրտ մի կին է եղած, և՛ ժպտացել է, և՛ ծաղիկ է ձգել, և՛ նամակ է գրել, և՛ աչքով է արել, և՛ այցելել, և՛ պատվերներ տվել... Շատ հետաքրքրական է 17-րդ դարի գանգեզուրցի այս հայ կնոջ պատկերն ու վարք ու բարքը: Եվ սիրող բանաստեղծը, որ գրեթե նրա ամեն մի շարժումը արձանագրել է, մեզ շատ գաղտնիքներ է հայտնում: Պատմում է, թե նա ինչպես էր իրեն մտիկ անում ու ժպտում. «Ղեղաջ աչքով մըտիկ անես, Ծիծաղելով հոգոց հանես» Կամ՝ «Պաղչումըն ծաղիկ քաղես, Ծածուկ դեպ ինձ ծիծաղես... Ծիծաղելով աչօք կանես կուզարմանամ...» Ծաղիկը: «Վարդըն ձըգեցիր մեջ գոգիս... Կտրեն հետ ծաղիկ ձըգեցիր... Ձեր կըտերն ծաղիկ ես արել, Խնձորի մեջըն մեխակ շարել, Ուղարկել՝ ինձ բարև արել...» Նամակ է գրում. «Զո ձեռօքըն մեկ գիր ես գըրել, Մեխակ և շաքար մեջըն լըցել, Ես հիվանդ էի՝ մեյլ իր գըրել, Ողջացայ, գալո՛ւմ, գալո՛ւմ, Զեշտացայ, գալո՛ւմ, գալո՛ւմ»: (47) 7 Եվ, ըստ երևույթին, ես «գալումը» մի բարեկեցիկ կին է, որ բարձի վրա է նստում ու շքեղ է հագնվում. «Բարձին վրայ բազմիս ի մեջ դարպասին, Մայիլ եմ աչքերիդ, հագիդ ատլասին...» Եվ Զովնաթանը, որ իր տաղերը գրել է իր ու նրա համար, էն տեսակ մանրամասնություններով է երգում իր սիրած կնոջը, որ գուցե կարելի էր նկարել: Ըիշտ Զովնաթանի սիրածի նման մեկն է սա էլ, միայն թե նա պարտեզից, վարդերի

միջից եր ժպտում, աչքով-ունքով անում, սա, պարտեզ չունի, կիսաբաց դռնիցն է ժպտում ու թաքուն նշաններ անում: Նա՝ Հովնաթանի սիրածը, կարմիր եր հագնում, սա՝ Քուչակի սիրածը, կանանչ: «...Հագեր է գկանանչ ճիւղպեն...» «...Չինչ հագեր՝ ամենն է կանանչ...» Եվ Հովնաթանի սիրածն ավելի հարուստ տանից է ու փարթամ, քան Քուչակինը: Մինչդեռ Հովնաթանը շքեղ մետաքսե, ոսկեթել հագուստ է նկարագրում ու թանկագին զարդեր, Քուչակն ասում է. «Քանի ու քանի կասեմ՝ մի՛ կենար խամ լաթերով. Գընա, ապրըշում հագիր, որ նախշած է ոսկի թելով...» Բայց միևնույն արարածներն են երկուսի սիրածն էլ և երկու բանաստեղծն էլ ինդրում են. «...Ինձ շատ մի՛ աներ աչքաւ ունքաւ...» (Հովնաթան) «Այդ քո ստեղծողիդ համար, երբ քայլես՝ զուներըդ մի՛ շարժեր...» (Քուչակ) Եվ երկուսն էլ երջանիկ են ու ամենայն իրավունքով կարող էին բացականչել. «Քան զսերն այլ քաղցրիկ պտուղ ի յաշխարհըս չաւտամ թե լինի...» (Քուչակ) Եվ «Ուրախ եմ, զալում, աման, աման...» (Հովնաթան) տառապանքը: Կանգնելու չենք սրան տանջող «բեմուրվաթի» պատկերի վրա, և ինքը Սայաթ-Նովան էլ քիչ է նկարագրում կնոջը, որովհետև ավելի շատ զբաղված է նրա տված վշտով, քան թե նրանով: Եթե Նաղաշ Հովնաթանի «զալումը» կարմիր եր ինքը ու կարմիր եր հագնում ոտից գլուխ, եթե Քուչակ Նահապետի «խոշ յարը» ինչ հագել՝ ամենն է կանանչ, Սայաթ-Նովայի «բեմուրվաթը», որի «ռանգը գուլգագի է նման» ու ինքը «Կրակե ծովեմեն դուս եկած՝ ոռաշ, ջեյրան», ըստ երևույթին, գուլգագ գույնն է սիրում և լոկ բառախաղի համար չի, որ բանաստեղծը իր գանգատի մեջ ասում է. 8 «Դուն կըրակ, հագածըդ կըրակ՝ վո՛ւր մե կըրակին դիմանամ...» Եվ ճշմարիտ որ՝ կրակ: Մինչդեռ Քուչակին ու Հովնաթանին իրենց սիրածները միշտ դիմավորում են ժպիտներով ու ծաղիկներով, մինչդեռ Նաղաշ Հովնաթանը սիրո արբեցուղյան մեջ գեղգեղում է. «Իմ սիրելին ետ ինձ բարև՝ Սըրտիս բուսաւ կանանչ տերև...»: Սայաթ-Նովան գանգատվում է. «...Եմ՛ր, ես քիզ բարով իմ տալիս, շուռ իս գալի՝ դալ իս անում...» Ու սիրտը կոտրած խոսում է ինքն իրեն. «...Աջաբ քիզ ի՞նչ գեթ իմ արի՛ կենում իս խըռով, աչքի լուս... Աշխարս աշխարով կըշտացաւ, ես քիզանից սով, աչքի լուս. Ինչ կուլի մեկ հիդըս խօսիս՝ թե վուր Սայաթ-Նովու եար իս... Հիդըս խօսի, մի՛ կենայ խըռովի պես, Տալդա տըլիր՝ գեմիս տարար ծովի պես. Կու մեռնիմ, չիս տեսնի Սայաթ-Նովի պես... (100) Եմ՛ր, ես քիզ ի՞նչ գեթ իմ արի, նստած իս միզնից բեղամաղ... Աշխարումըս իմըն դո՛ւն իս, Բեմուրվաթ իս, մուրվաթ չունիս...

Չայ կնոջ կերպարը գրականության մեջ

/19-20-րդ դարերի հայ գրականության մեջ /

7-9-րդ դասարանների հայ գրականության դասագրքերում հայ գրողների ու բանաստեղծների մոտ ավելի շատ ներկայացված է սիրո թեման, քան կնոջ կերպարը կենցաղում, հարուստ ընտանիքում կամ հասարակության մեջ:

Խաչատուր Աբովյան: Չայ գրականության մեջ Աբովյանն առաջինն էր, որ կերտեց հայուհու լիարժեք ու ամբողջական կերպար: Կանայք Աբովյանի երկերում հանդես են գալիս ոչ միայն մայրեր ու քույրեր, այլ որպես սիրված կանայք: Կնոջ կերպարը միաժամանակ ծառայում որպես միջոց՝ Աբովյանի աշխարհայացքի և փիլիսոփայության համակողմանի դրսևորման համար: Եվ եթե բացելու լինենք Աբովյանի մտքերի ընդհատակյա հոսքը, ապա պարզ կդառնա, որ մեծ լուսավորիչը հայ իրականության մեջ հող նախապատրաստեց կնոջ իրավունքների ու քաղաքացիական ազատությունների գեղարվեստական հետազա մարմնավորումների համար:

Պետրոս Դուրյան: «Չոր տերևների վրա շրջագգեստների շրջունը տարածող գեղուհին», «գունատ ճակատով և պաղ ձեռքերով նե-ն», որ մարդակայնորեն սիրել և ասել գիտի « վարդ այտերով աղջիկը, բարձրահասակ ու գեղադեմ հայուհին», « վերջալուստի աղջիկը, կինը՝ ծոծրակին վրա ծալ-ծալ թափվող մազերի հյուսքով»: Կարելի է ասել մինչդուրյանական շրջանում դժվար է գտնել կնոջ այսքան կենդանի և այսքան հարուստ նկարագրություն:

Գաբրիել Սունդուկյան « Պեպոն», Ես սովորողներին եմ ներկայացրել Պեպոյի քրոջը՝ Կեկելին: Աղջիկը գնահատվում էր իր օժիտի չափով: Իսկ եթե հանկարծ պարզվում է , որ օժիտ չունի, նրանից հրաժարվում էին:

Չովհաննես Թումանյան: «Թմբկաբերդի առումը» Չ. Թումանյանի երկրորդ գլուխգործոցն է «Անուշից » հետո: Այն Էպիկական պոեմ է, ուր իշխում է մարդու գործի անմահության խորհուրդը:

Անց են կենում սեր ու խընդում,

Գեղեցկություն, գանձ ու գահ,

Մահը մերն է, մենք՝ մահինը,

Մարդու գործըն է միշտ անմահ:

Սակայն այս պոեմում ես ուզում եմ անդրադառնալ կնոջ կերպարին:

Թմկա տիրուհին պոեմի գլխավոր հերոսուհին է: Իսկ ով է կինը: Հերոսին անսահման ուժ ու կարողություններ ներշնչող, բայց և միաժամանակ նրան խորտակող՝ Ֆարսի անմահ բլբուլ Ֆիրդուսին.

Ինչը կհաղթի կյանքում հերոսին,

Թե չըլիսեին կինն ու գինին

Թումանյանի հերոսուհին անանուն է. այսինքն՝ նա չի ցանկացել, որ պատմության մեջ մնա դավաճան այդ կնոջ անունը:

Մուրացան: Փառահեղ «Գևորգ Մարգարետունի» պատմավեպում՝ Սեդայի և Սահականույշի կերպարները հիացմունքի և հայրենասիրության փայլուն օրինակներ են:

Գրիգոր Չոհրապ: Նորավեպի իշխան Չոհրապի ստեղծագործությունների զգալի մասը կանայք են՝ ամեն դասից և խավից: Նա մեծ նորություն է բերել մեր գրականության մեջ, հարստացրել մեր գրականության կին կերպարների պատկերասրահը:

Կինը կյանքի ժպիտն է, որ մարդկային հոգու, գեղեցիկի և բանաստեղծության պահանջը տեսանելի առարկայի վրա բավարարելու հնարավորություն է ընձեռում: Կնոջ ամենաթանկագին հատկությունը գեղեցկությունն է «Կինը ծիծաղ մըն, պետք չէ, որ լացի փոխվի»:

Ինչպես Չոհրապի հերոսուհիներից շատերին կորսված կյանքի մի ճակատագիր է վիճակված « Այրին» նովելի հերոսուհին:

Տակավին չճաշակած կյանքի հաճույքը՝ Չարդարը պիտի երագեր վերադարձի կարոտը, իր մեջ զգար կնոջ զգացողությունների վայելքը, որը, ավա՜ղ, այդպես էլ մնաց անկատար: Չարդարի կերպարով հեղինակը ընդհանրացված գծերով և հուզականությամբ ներկայացրել է բացարձակապես իրավագուրկ, « Իր մշտնջենական կրավորական դերին» մեջ, «գանգատվելու անգամ զորության» չունեցող գյուղացի կնոջ կյանքը՝ կազմված չարքաշ աշխատանքից, զրկանքներից ու արցունքից: Նա ստիպված է սիրել իր համար «սահմանված ամուսինը», որի հետ ամուսնությունիվ հետո էլ, մտերմությունից զուրկ է «միևնույն հարկին տակբնակվող բազմաթիվ ազգականներու աններող նայվածքին տակ», ապա ստիպված է

համակերպվել , բայց շարունակում էր կարոտով սպասել, հույսերը տարիների հետ ջլատվում էին, արցունքը ցամաքում էր, բայց դեռ սպասում է: Նրա ծնկերը մաշել էին, գյուղի մատուռի սալահատակը, բայց չէր դադարում աղոթելուց «հանդիմանության պես» աղոթքներով, որոնց մեջ իր երիտասարդ կյանքի ողջակիզման, իր սիրո մոխրացման, իր անմիտ զոհաբերության պատասխանատուն է որոնում:

Միայն ինքը չէր դժբախտ, բազմաթիվ «հեգ, աղեբեկ ու կորաքամակ օրինակները կային իր առջև, որոնք ստվերներուն պես անխոս՝ իր շուրջը կդառնային, և Չարդարի երիկ կնկան ուրիշ տեսակը չէր երևակայած երբեք»:

Նար-Դոս: Այնքան իրական է նկարագրել կնոջ կերպարը « Մեր թաղը» պատմվածաշարում. Դասագրքում ներկայացված է միայն «Ես և նա » պատմվածքով:

Ակսել Բակևոց: « Ալպիական մանուշակը» կամ «Խոնարի աղջիկը» կարող էին տալ 20-րդ դարի հայ կնոջ կամ աղջկա իրական պատկերը, բայց Բակունցը ներկայացված է միայն «Սպիտակ ձին Վ» պատմվածքով:

Վահան Տերյան: Իր սիրո մասին խոսելիս հատուկ շեշտում է իր սիրած մարդու աչքերը: Նա նշում է, որ սիրում է աշունը, իր սերը: Տերյանը միշտ գեղեցիկ աշնան և սիրո մեջ համեմատություն է դրել:

Յրաշք-աղջիկ, գիշերների թագուհի,
Ճառադայթող քո աչքերով դու եկար,
Ոսկե բոցով լցրիր հոգին իմ տկար,
Յրաշք-աղջիկ, ցնորքների դիցուհի...

Կախարդ լուսնի հրապուրող շողի պես
Դու ժպտացիր գուրգուրանքով սեթևեթ,
Ազատ սիրտըս շղթայեցիր առհավետ,
Յրաշք-աղջիկ, դո՛ւ, միշտ հաղթող ու միշտ հեգ:

Դու մի ցավոտ հիացումի երգ գիտես,
Քո ժպիտում կա խորհուրդի մի փայլանք,
Քո աչքերում կա մի անանց զմայլանք.
Դու չըմենոնող մի վայելքի խոսք գիտես...

Յրաշք-աղջիկ, անհայտ երկրի մանուշակ,
Գիշերային արեգակի ճառագայթ,—
Դու իջնում ես՝ կարող, որպես մահու խայթ,
Քնքուշ, որպես անդարձ բախտի հիշատակ...

Ավետիք Իսահակյան: Բանաստեղծի համոզմամբ՝ սերը ամենաբարձր ու
վեհ զգացմունքն է: Իսկ իմ կարծիքով կինը սեր է:

Սիրո լավագույն երգերից են «Մի մրահոն աղջիկ տեսա », «Ռավեննայում»,
«Յավերժական սեր» ստեղծագործությունները:

Մի մրահոն աղջիկ տեսա
Ռիալտոյի կամուրջին,
Յորդ մազերը - գետ գիշերվա,
Եվ հակինթներ՝ ականջին:

Աչքերը սև - արևներ սև,
Արևների պես անշեջ,
Գալարում էր մեջքը թեթև
Ծաղկանկար շալի մեջ:

Աչքս դիպավ աչքի բոցին,
Ու գլուխըս կախեցի.
Ժպտաց ժպտով առեղծվածի,
Յավերժական կանացի:

Միամիտ չեմ՝ հավատամ քեզ.
Տառապանքս փորձ ունի.-
Մի մրահոն կույս էր քեզ պես,

Եզրակացություն

Այսպիսով՝ կնոջ կերպարը բոլոր ժամանակներում առանցքային թեմա է եղել հայ գրականության մեջ: Փոքր-ինչ հետազոտությունից հետո հասկանալի է դառնում, որ տարբեր ժամանակներում ունեցել են կնոջ կերպարի տարբեր դրսևորումներ, սակայն անքննելի է այն, որ կնոջ կերպարի մի շարք առանցքային գծեր ակնհայտ են նրանով, որ հայ կինը ազգային արժեհամակարգի կրողն է: Այն ինչ փաստում է ողջ գրականությունը, ապացուցում է ազգային գենետիկական համակարգը, հայի մաքրամաքուր գենը և նրա չանհետացող բնույթը:

Մենք անդրադարձանք Խորենացու կերտած հայրենասեր, քաջ, համարձակ և նվիրյալ կնոջը, միջնադարյան աստվածային շղարշով առեղծվածային արարածին,

անզուգական գեղեցկուհուն , որ խենթության կարող է հասցել աշուղ-բանաստեղծին:

Մեր անկրկնելի Էպոսի հերոսուհիների մեջ մենք տեսանք քաջ, համարձակ, ըմբոստ, բայց միևնույն ժամանակ իրենց ամուսինների համար խոնարհ ու անձնագրի կանանց:

Ավելի ուշ շրջանում բացահայտեցինք կնոջ ռոմանտիկ եռությունը, նրա վերափոխելու կարողությունը , մարդկային որակներն ու ողջ հմայքը, որ կարող է փշրել և վերակառուցել ցանկացած սիրտ:

Օգտագործված գրականության ցանկ

- 1.Մովսես Խորենացի , Պատմություն Հայոց, Երևան 1968:
- 2.Սասունցի Դավիթ, Հայկական ժողովրդական Էպոս, Երևան 1990:
- 3.Գրիգոր Չոիրապ, Նովելներ:
- 4.Հովհաննես Թումանյան, Երկեր:
- 5.Վահան Տերյան, Մթնշաղի անուրջներ (1903-1908)
6. Ավետիք Իսահակյան,
https://www.isahakyanmuseum.am/htmls/banastercutyunner_cank.html